



Լեռնաջուր-Վանաձոր ինքնահոս ջրամատակարարման համակարգ

Երկիրը. Հայաստանի Հանրապետություն
Մարզ, քաղաք Լոռու մարզ, ք.Վանաձոր
Պատվիրատու ՀՀ Քաղաքաշինության նախարարություն
Ժամկետները. 2000 - 2001թթ.

Ծառայության մոտավոր գինը

6.0 մլն. դրամ

Տեխնիկական առաջադրանք

1. Նախսանախագծային ուսումնասիրություններ
2. Հիդրոտեկրաբանական ուսումնասիրություններ
3. Աշխատանքային նախագծերի մշակում



Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիրը.

- ✓ Կատարվել է ստորերկրյա ջրհավաք ավազանի և հատկապես Մայմեխ և Լեռնաջուր գետակների միացման տարածքի մանրակրկիտ ուսումնասիրում:
- ✓ Կատարվել է ստորերկրյա հիդրոտեկրաբանական հետազոտություններ ըստ որի ընտրվել է ջրընդունիչ կառուցվածքի տիպը և տեղը:
- ✓ Ընտրված տիպի ջրընդունիչին համապատասխան կատարվել է հիդրավիկական հաշվարկ, որոշվել հավաքվող ելքին համապատասխան, դրենաժային խողովակաշարի տրամագիծը և երկարությունը:
- ✓ Հաշվի առնելով ջրընդունիչի տարածքի տեղանքի թեքությունը նախագծով նախատեսվել է Մայմեխ ճյուղի վրա լրացուցիչ իրականացնել 1մ բարձրությամբ և 25մ երկարությամբ, իսկ Լեռնաջուր ճյուղի վրա՝ 2.3մ բարձրությամբ և 30մ երկարությամբ ստորգետնյա պատնեշի իրականացում:
- ✓ Մշակվել է բաժանարար – կարգավորիչ խուց, որտեղ կհավաքվեն Մայմեխի, Լեռնաջրի և պատվարի դրենաժներից հավաքված ջրերը:
- ✓ Հավաքված ջրերի քլորացման համար նախատեսվել է նոր քլորակայան վակուումային ռեժիմով գործող քլորատորների կիրառմամբ:
- ✓ Մշակվել են տեխնիկական մասնագրեր, ծավալների ամփոփագրեր, շին. աշխատանքների կազմակերպման նախագիծ և նախահաշիվներ:



Աշխատանքի նպատակն է

Բարելավել Վանաձոր քաղաքի Տարոն և Տավրոս բնակելի թաղամասերի ինքնահոս ջրամատակարարման համակարգի անխափան աշխատանքը, բարձրացնել խմելու ջրի որակը և ապահովել բնակչության ջրապահանջը:

